



ՕՐԱԳԻՐ

ԲԱՐՈՅԱԿԱՆ, ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ

ՏԵՍՔԵՈՒԾԵՐՆ ԵՎ ԸՆԴԿԵՐՆ

ԳԻՏԵԼԵԱՑ

ԺԱ. ՏԱՄԻ ԹԻՒ 3.

1853

ՓԵՏՐՈՒԿԱՐԻ 1.

ԲԱՐՈՅԱԿԱՆ

ԴԱՍՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՑԻՆ

Շնորհատք Նոր տարի :

ՊԻՍՏԻ ՀԻմա մենք պէտք է որ այս հշմարտութիւնը աղեկ միտք առնենք, ու աղեկ տարի մը ընտրելու համար ջանանք շիտակ սիրտ գործածելու, գիտնալով որ առանց անոր անկարելի է աղեկ բանի մը ընտրութիւն ընել:

Իսկ ես այս ալ ըսեմձեզի՝ որ հիմա այսափ զգուշութիւններ ընելէն ետև, կարծեմ որ դարձեալ պիտի չյաջողնք. վասն զի այս շիտակ սիրտ գործածելու մէկ մեծ գժուաբութիւնն ալ այս է՝ որ երբ մէկը կիրք ունի սրտին

մէջ, ու կը տեսնէ որ զկրնար համաձայնիլ ուրիշներուն կարծեացը, ինքզինք քննելու տեղ՝ թէ շըլայ որ կիրք գտնուի իր սրտին մէջ, ինքն իր սրտին շիտակ ըլլալուն վրայ չտարակուսիր, այլ կը սկսի ուրիշներուն վրայ կարծիքի երթալ՝ թէ անոնց սիրտերը շիտակ չեն, անոր համար չեն կըրնար իրեն հետ համաձայնիլ։ Խւ այսպէս ամէն պատճառները գիտնալէն ետև, գարձեալ անհնարին կ'ըլլայ աղեկին ընտրութիւնը։

Ուրեմն ինչպէս ընենք. կ'երեայ թէ մեզի անկարելի պիտի ըլլայ աղեկ

տարի մը ընտրելը : — Իսյց իմ միտքս զձեզ յուսահատցնել չէ . այլ ընտրութիւն ընելու ատեննիդ զգուշութիւն . նիդ աւելցնել , որ ըլլայ թէ ձեր կրքերէն խաբուած՝ առէկին ընտրութիւն ըլկարենաք ընել :

Իսկ թէ ինչ աւելի զգուշութիւն մը արդեգք կրնանք ընել խաբուելու վտանգէն ազատ ըլլալու համար , մարդուս կրքով գործելուն յայտնի սովորական օրինակը մնաքերնիս բերենք : Արդուս հոգին մարմնոյն մէջ փակուած է՝ իբրև մէկ տուփի մը մէջ . երբ մարդս աչքը կը բանայ , կը սկսի իմանալ ձանչնալ . ըսել է թէ հոգին իր տփոյն մէջէն կը սկսի տեսնել զաշխարհս . բայց ինքը տփոյն մէջ ըլլալով՝ պէտք է որ տփոյն ծակերէն նայի . և մարդուս կիրքերն են հոգւոյն տեսնելու ծակերուն դիմացը դրուած ապակիները գունզգույն . որոնք երբ խիստ գունաւոր կ'ըլլան , ուրիշներէն ալ կը ձանցուին . որ կը սկսին ըսել՝ թէ սա մարդս այս և այն կրից տէր է . որ ըսել է՝ թէ այս գոյն և այն գոյն ապակիներ կը գործածէ զաշխարհս տեսնելու ատէն : Իսկ այն մարդը ինչ տեսակ գուներով ապակիները որ կը գործածէ իւրաքանչիւր առթի մէջ , նոյն գունով կը տեսնէ զենթակայները , ու կարծէ թէ սամէն բան իր տեսած գունով են : Ահա ամէն շփոթութիւն կը պատճառին աշխարհիս երես այն ապակիներէն , այսինքն կիրքերէն՝ զորոնք կը գործածէն մարդիկ . և անոր համար խիստ դժար կ'ըլլայ կարծիքները միաբանել մէկ բանի մը վրայ , երբ՝ ի սկզբան կը սկսին հակառակ երենալ իրարու . որ ըսել է՝ թէ իրարմէ տարբեր գունով ապակիներն են գործածածնին : Այսանց ապակիները փոխելու հազար աշխատին շրտակ սիրտ գործածելու՝ անհնարին կ'ըլլայ միաբանիլը , որովհետեւ ապակիներուն գոյները տարբեր են իրարմէ : Աւ որչափ տեսակ կիրք որ կը գտնուի մէկ մարդու մը վրայ , կը ընայ ըսուիլ թէ այնչափ աեսակ գունաւոր ապակիներ դրած է իր հոգւոյն տեսնելու ծակերուն առջելը : Աւ աս ալ յայտնի է որ ա-

ւանց կրից մարդ մը չըլլար աշխարհքս , ոմանք աւելի , ոմանք պակաս . մանաւանդ քանի մը բնական կիրքեր կան , որոնց ամէն մարդ ենթակայ է . ինչպէս են հայրենասիրութիւն , ընտանեաց սէր , անձնասիրութիւն և կրօնասիրութիւն որուն մէջն որ ծնած է , որոնց վրայօք մէկը իր անձին համար ուղիղ դատաստան չկրնար ընել . որոնք կրնան դիւրաւ՝ ի մոլութիւն փոխուիլ՝ թէ որ մէկը զգոյշ երկիւղածութեամբ , ձմարտութեան սիրով իր մտածութիւնները քննելու չպարապի երկար ժամանակ : Աւ ասոնցմէ ալ առաջ կու գան ուրիշ կրքեր , որոնց շատն ալ մոլութիւն , ախտ կը կոչուին : Այսկար կրթութիւնը և փորձը կը սովորեցնեն՝ ասոնց մէջէն որոնք որ գունաւոր ապակի են՝ փոխել , և անոնց տեղ անդոյն ապակիներ գործածել :

Ուրեմն հիմս եթէ մենք կուզենք ընդհանուր մարդկութեան համար մէկ աղէկ տարի մը ընտրել , նախ պէտք է որ հաստատ մնաքերնիս դնենք՝ թէ ամենքնիս ալ մեր գունաւոր ապակիներն ունինք , ու ըստ այնմ զգուշանանք զանոնք գործածելէն : Ասեմ որ մէկ բան մը վարժեր ես գու դեղին տեսնելու , պէտք չէ որ հաստատ միտքդ դնես՝ թէ այն բանը դեղին է , երբ կը տեսնես որ կան մարդիկ որ քու այն դեղին տեսածիդ ձերմակ կ'ըսեն . այլ պէտք է հետաքրքրես , հարցընես , մանաւանդ այնպիսի փորձ մարդկանց , որոնց համար շատերը կը վկայեն՝ թէ գունաւոր ապակի գործածելու սովորութիւն չունին . և եթէ կրնաս ինքիրմէդ ալ քննէ պատճառները՝ որոնցմով կրնաս իմանալ թէ այն բանը ինչ գոյն է : Այդ այս ամէն կարեւոր զգուշութիւններով պատրաստուած , տեսնենք հիմա թէ որն է այն աղէկութիւնը որուն մէջ ամենուն ուզած , փափաքած աղէկութիւնները կը ընան գտնուիլ , զորն որ այս տարի ես կուզեմ բարեմաղթել ձեզի , որպէս զի դուք ալ բարեմաղթէք իրարու , որով ամենքնիս ալ այս տարի ուրախ ու գոյն ըլլանք :

Արշափ որ հիմա ,քանի որ չեք լսած ,
տարակուսած իրարու երես կը նայիք՝
թէ այդպէս բան կայ արդեօքաշխարհիս
երեսը , այնչափ աւելի պատճառներովը
լսելէն ետև ամենքնիդ մէկ բերան պի-
տի ըսէք՝ թէ այն է մէկ հատիկ աղե-
կութիւն աշխարհիս երեսը ամէն մար-
դու համար , և ամենուն սիրտը միսի-
թարութեամբ լեցընող : Իւ է այն մէկ
հատիկ ՃՇՎԱՐՏՈՒԹԻՒՆԸ : Իշ ալ կը
բարեմաղթեմ այս տարի ձեզի ամենուդ
որ Ճշմարտութիւնն յաղթանակէ սրտեր
նուդ վրայ , ամէն խորհուրդներնուդ ,
խօսքերնուդ և գործերնուդ մէջ թա-
գաւորէ անխաք Ճշմարտութիւնը : Ի՞շ
ըլլայ բոլոր մեր գիտունքը , ամենքնիս
ալ որչափ որ գունաւոր ապակիներ ու-
նինք հոգիներնուս տեսութեանը առջև՝
գետինը գարնենք կոտըրտենք . որպէս զի
ամէն բանի մէջ Ճշմարտութիւնը պարզ
իր պայծառ գունովը տեսնենք : Իւ մի
ըսէք թէ ասկից մեզի ինչ օգուտ . վասն
զի ամենքնիդ ալ ամէն ուղածնիդ այս
Ճշմարտութեան մէջ կը գտնէք : Օ՞ր
օրինակ .

Դու Պարոն Ա . որ կուզես յաջող
առուտուրի տարի մը . հիմա քննէ թէ
ինչուան հիմա ունեցած անյաջողու-
թիւններդ ինչ պատճառէ առաջ եկեր
են . կամ խարդախ Ճամբայներ գործա-
ծեր ես , կամ հաստատուն բանի մը
զլուի չես տուած , կամ մարդոց հետ ի-
րենց արժանաւոր պատուով վարուիլ չես
գիտցած . որ մէկն ըսեմ . քննէ , կը տես-
նես որ Ճշմարտութեան Ճամբուն մէջ
չես կեցած , և այն եղեր է պատճառքու
անյաջողութեանդ : Ի՞այց այս բաներս
իմանալու համար , ինչպէս որ առաջա-
զրեցինք , գունաւոր ապակիները վեր-
ցու մտացգ առջեւէն , ու անանկ քննէ
ինքզինքդ : Իսկ եթէ դու , առանց ինք-
զինքդ խաբելու , յիրաւի ամենայն ըզ-
գուշութեամբ Ճշմարտութեան Ճամբէն
չես հեռացած ու դարձեալ անյաջողու-
թիւն ունեցեր ես , այն Ճախորդութի-
ները Իշտուած դրկեր է քեզի որ քու
համբերութիւնդ փորձէ , ու երբ զքեզ
գտնէ կատարեալ իրեն հաւատարմու-

թեան մէջ , մոքեդ չանցած մեծ յա-
ջողութիւն պիտի տայ քեզի : Իւ եթէ
այդպէս է , այն տարիներն որ կարծես
թէ քեզի գէշ եղեր են , այդպէս չէ .
անսնք քեզի մեծ բարիք պատրաստեր
են , որ օր մը պիտի սկսիս վայելել :

Իսկ դու Պարոն Բ . կուզես բաղդի
տարի մը . ասկից մեծ բաղդ չկրնար ըւ-
լալ՝ որ մարդս Ճանճնայ աշխարհիս ու-
նայն անցաւորութիւնը վաղաթառամ
ծաղկի մը պէս , ու սիրտը չկապէ ա-
նոնց , ու չփափաքի անոնց մէկ քանի մը
օրուան առերեւյթ պայծառութեանը .
ահա զասնք քեզի ալ կը սովորեցնէ
Ճշմարտութիւնը , որ գոհը ըլլաս աշխարհ
քիս երեսը չափաւորով , ու փափաքիս
անանց հարստութեան : Ի՞ա քեզի հա-
մար ալ կարծածէդ աւելի աղէկ տարի
մը՝ որ յաւիտենական երջանկութեան
տէր կ'ընէ զքեզ :

Դու ալ Պարոն Գ . աւողջ կեանք կը
փնտուես ընտանեացդ . Ճշմարիտ է թէ
աւողջութիւնը շատ փափաքելի բան է ,
բայց այն ալ գարձեալ վաղաթառամէ .
քիչ ատենէն դարձեալ վրան եկածը հի-
ւանդութիւն ու մահն է . անոր համար
աւելի աղէկ տարի կ'ունենաս , եթէ
ինդրես Ճշմարտութեան Ճամբէն չխո-
տորիլը . օրովհետեւ երբ Ճշմարտութիւ-
նը քեզի առաջնորդէ , այն հիւանդու-
թեանց վիշտերը քու առջեւդ պիտի բա-
նան մէկ կեանք մը քու մոքեդ անցա-
ծէն առողջ , և ամէն հիւանդութիւն-
ներէն ազատ և անվախձան : Իւ եթէ
այս յուսով փնտուես զՃշմարտութիւնը
աղէկ տարի մը ունենալու համար , այն
Ճշմարտութիւնը կրնայ քեզինաե վայր-
կենականքու փափաքած առողջ կեանքն
ալ տալ քեզի : Ի՞այց որ մէծն է , գու-
զՃշմարտութիւնը սիրելուդ համար՝ ե-
թէ այս տարիդ ալ հիւանդութիւննե-
րու մէջ անցնես , սիրտդ միսիթարեալ
կ'ըլլայ անոնց վախճանը մտածելով :

Դու Պարոն Դ . աշխատանքէ ձան-
ձրացած՝ կուզես հանգիստ ուրախ տարի
մը անցնել . քու ուղածդ բուն իսկ Ճշ-
մարտութեան խոստացած տարին է . ե-
թէ զու քու քաշած նեղութիւններդ ե-

ըրած ծառայութիւններդ ձշնարտութեան հետեւելու մտքով լնես , զիտնաս որ առանց ուրիշի օգնութեան կարութելուքեզի կը պատրաստես հանգիստ տարի մը . և չէ թէ մէկ տարի մը միայն , այլ անհատնում տարիներ . զայս զիտնալով դու ալ պէտք է որ մեզի հետ խրնդրես ձշմարտութիւնը պայծառ տեսնելու տարի մը . և այսպէսով թէ և մէկն քու հանգելու փափաքիդ չհանիս , բայց գիտնալով թէ այս աշխատանացդ փոխարէն հանգիստ պիտի գտնես , աշխատանքդ շատ կը թեթևանայ կ'անուշնայ :

Իսկ ձեր ամենուն փափաքն է որ ազգային թշնամութիւնները վերնալու տարի մը ըլլայ այս : Ձեր ուղածը նոյն իսկ մեր ամենուն ընտրած պայծառ ձըշմարտութեան տեսութիւնն է . վասն զի երբոր ձշմարտութիւնը կ'երեւայ ամենունու պայծառ՝ առանց մէկ գոյն մը մէջը խառնուելու , մէկն կը կատարուի այդ փափաքնիդ . որովհետեւ այն ժամանակ ամէն ազգայինք որ և իցէ պատճառաւ եղած թշնամութիւնը մէկդի կը զնեն՝ պարզ ձշմարտութեան մէջ տեսնելով ամէն մէկը իր սիրալմունքը , և ամէնքը մէկ սիրու մէկ հոգի , առանց իրար նախատելու , ձշմարտութեան մէջ կը կենան : Ի՞նոր համար հարկաւոր է որ ամենքնիս ուրիշներուն դէմ սըրտերնուս մէջ ունեցած թշնամութիւնը մէկդի թողլով սկսինք մոտածել պատճառ՝ թէ ինչու համար սա նա մարդուն կարծիքները մեր մոտացը հակառակ կ'երեւան : Հայտնի է որ գունաւոր ապակի գործածելու հետ ենք . ուրեմն իւրաքանչիւր ոք մոտածէ՝ թէ իր գործածած գունաւոր ապակին որ բանին մէջ է . որոնց հիմնակամ ապակիները չորս հատեն ըսինք հայրենասիրութիւն , Ի՞նտեսաց մէր , Ի՞նձնասիրութիւն և Կրոնասիրութիւն : Օ ասոնք պէտք է աչքերնուս առջեւ բերենք ամենքնիս ալ առանձին , ու սկսինք քննելու մեր սիրտը՝ թէ ասոնցմէ որոնք գունաւոր են մեր մոտաց առջին . յայտնի է որ անոնք միայն , որոնց մէջ որ կ'երեւայ թշնամութեան

պատճնառ սրտերնուս մէջ . իսկ որոնց մէջ որ կարծեաց տարրերութիւն չկայ , և հակառակութիւն չէնք կրեր սըրտերնուս մէջ օտարի մը հետ , ամենուս մոքին զրածը համաձայն ըլլալով իրարու , ըսել է թէ անոնք պայծառ ձըշմարտութեան տեսութիւններ են . որուն նշանն է ամէն մարդուն նոյնակես տեսնելու : Ուստի զասոնք մէկ զի թողած մէկանները քննութեան տակ ձգելու է : Ասոնցմէ կրնայ ըլլալ որ մէկ բանի մէջքու տեսածդ պայծառ ձշմարտութիւն է և ուրիշնը գունաւոր , որով քեզի դէմ կը հակառակի . մէկալբանին մէջ ալ կը ըլլալ որ երկուքներնուդ տեսածն ալ գունաւոր է , բայց այլ և այլ գունով , և անոր համար կը հակառակիք : Խորունկ մը քննելով զանոնք գտնելու է , և այսպէս քննելէն և տեղեկանալէն ետքը , ամէն մէկերնիս սիրով մեր գործածած ապակինները նետելու ենք . և այսպէս կ'ըլլայ ուղած խաղաղութիւննիդ , ուսկից ամէն բարիք առաջ կուգան :

(Երինակի համար . Հիմա սկսինք հոտեղս մէկ բանի մը վրայ քննութիւն ընելու , որ իմանանք ամենքնիս միաբան ձշմարտութիւնը պայծառ տեսնելու կերպը : Համարինք թէ հայրենասիրութեան պատճառաւ թշնամութիւն կայ սրտերնուս մէջ քանի մը անձանց դէմ : Ի՞րը Ի՞ենին համար կ'ըսէ՝ թէ չափազանց հայրենասիրութեանը պատճառաւ մոլորեր է , ու ըսելու և ընելու բաները կ'ըսէ և կ'ընէ . այսպէս միտքը դրած ըլլալով կ'ատէ զի՞ենը : Ի՞ենն ալ Ի՞րին համար կ'ըսէ՝ թէ իսեղձը տգէտ է , ազգը չձանցնար , և չգիտեր թէ ամէն մարդ իր հայրենիքը պէտք է որ սիրէ ու պատուէ . այս և ասոր նման խօսքեր ըսելով կ'ատէ զի՞յրը : Հիմա ասոնք երկուքն ալ կարծեն՝ թէ իրենց մոտածածը պայծառ ձշմարտութիւն է , ու զիրար ատելը իրաւունք կը սեպէն : Հայտնի է որ ասոնք կամ երկուքն ալ այլ և այլ գուներով ապակիններէ կը տեսնեն զձշմարտութիւնը , և կամ երկուքին մէկինը միայն գունաւոր է և

մէկալինը պայծառ : Այս մեծ դժուարութիւնը հոս է՝ գունաւոր ապակի գործածողին հասկրցնել և հաւատացընել՝ թէ քու ապակիդ գունաւոր է, և կամ երկուքին ալնոյնպէս, և ցուցընելթէ պայծառ ձշմարտութիւնն այս է : Այս բանս հասկրցնելը այնչափ դժուար է, որ բոլոր արեւելեան և արեմեան հին և նոր իմաստունները՝ թէպէտ ուրիշ անթիւ խելքէ մաքէ չանցած դիւտեր գտան, բայց այս բանիս մէկ համառօտ դիւրին ձամբայ մը չպտան, որչափ որ ամենէն հարկաւոր և վեր 'ի վերոյ նայելով ամենէն դիւրին գտնելու բան կ'երեւայ :

Այս այսպէս ըլլալով, դարձեալ խօսքերնուս ծայրը հոս հասաւ՝ թէ աղէկ տարի մը չկարենանք պիտի ընտրել հիմա այսօր : Ուրեմն դուք պարոններ ինչ կը մտածէք, յուսահատինք, թողունք այսպիսի հարկաւոր խնդիրքնիս երեսի վրայ :

թ . Սէ չթողունք . ձեռքերնես եկած հնարքն ընենք . որովհետեւ այս խիստ աղէկ բան է :

ժ . Եթէ բոլորովին ալ չկարենանք համելու մեր փափաքին, գոնէ քիչ մը աղէկ ըլլայ տարինիս :

Ես ձեզի բան մը ըսեմ . ձեր այս փափաքը իմ սրտիս մեծ միսիթարութիւն է . և եթէ դուք այսպէս կը փափաքիք այս գիւտը գտնելու, ես անշուշտ եմոր կը գտնենք : Որովհետեւ ամենէն մեծ արգելք այս ընտրութեր, գունաւոր ապակիներուն վերցուիլն է, ամէն մարդուս չուզելը որ իրեն ապակւոյն այսինքն կրից վրայ քննութիւն ըլլուի : Այս է սովորութիւն ամէն գունաւոր ապակի գործածողի, ամեննեին չուզեր լսել և չուզեր տարակուսիլ՝ թէ գուցէ ինքը այս կամ այն ձշմարտութիւնը տեսնելու գունաւոր ապակի կը գործածէ . և այս քննութիւն չուզելը այնպիսի անյաղթելի արգելք մըն է, որով անկարելի կ'ըլլայ որ և իցէ ձշմարտութիւն մը տեսնել պարզ և պայծառ ամենքը միաբան . անոր համար ալոչ երբէք կը դարբին իրիւները և շփոթութիւները մարդ

կանց մէջէն : Այդ եթէ այս անյաղթելի կարծուած արգելքը վերցընելով յիրաւի պարզ սրտով կ'ուզեք քննել իմանալ ամենքնիդ ձեր որ բանի մէջ կամ երբ գունաւոր ապակի գործածելնիդ խիստ դիւրաւ կը համնիք ձեր փափիքին :

Ուրեմն մենք հիմա այս ամէն բնութեան խարդախութիւնները իմանալէն ետեւ կրնանք այս պայծառ ձշմարտութիւնը ձանցնալու ձամբուն համար քանի մը կանոններ սահմանել . որոնց Արթինը, ինչպէս որ հասկրցանք, է ձշմարիտ փափաք խուռվութեանց ջընջուելոն, և ամէն բանի պայծառ ձըշմարտութիր ամենուն սրտին մէջ յայտնուելու : Փառք Աստուծոյ որ զայս մենք ամենքնիս ունինք :

Երկրորդ կանոնն է՝ որ ամէն մարդյանձն առնու իր մաքին զրածն ալ, իր նայած ապակին ալ ըսեմ, հասարակաց մուաց դատաստանին քննութեան տակ ձգելու : Ասոր ինչ կ'ըսեք :

Ի . Հարկաւոր է, և պէտք է որ այնպէս ըլլայ՝ ձշմարտութիւնը յայտնուելու համար . վասն զի ասով որուն որ մուածածը և կարծածը շխտակ է, քըննուելովը աւելի յայտնի կ'ըլլայ ամենուն ալ . իսկ որուն որ միտքը զրածին մէջ ծռութիւն կայ, ինքն ալ ուրիշներն ալ անոր միտքը զրածին որ մասին մէջ ծռութիւն ըլլալը՝ աղէկ կը հասկրնան :

Երրորդ կանոն . ամենքնիս զիտնանք որ քննութեան ատեն երբ մէկ բանի մը վրայ կարծիքները կը տարածայնին, մէկուն կարծեացը ծուռ ըլլալուն նշանն է՝ երբ նա կը սկսի կիրք ելլելիր կարծեացը ընդունելի ըլլալուն համար, և չուզեր սելիր կարծեացը գէմ եղած պատճառները, և կը ջանայ ուրիշներուն յայտնի պատճառներուն՝ իր խելքեն մեկնութիւներ տալ

Հ . Այսպէս է . խօսքի մը մէջ կիրք մուածին պէս ապակին կը գունաւորի : Ակնարքնես մէկը կրիւք խօսիլ սկսածին պէս, անոր ըսածին ծուռ ըլլալը կը յայտնուի . ալ անոր կարծիքը ուրիշ քննութեան կարօտ չըլլար :

Չորրորդ՝ պէտք է մաքելնիս հաստատուն զնենք [թէ բանի մը շխտակն իմանալէն ետքը՝ կարծիք փոխելը ամօթչէ, այլ մանաւանդ մեծ դիւցազնական առաքինութիւն է, որուն վարձքն ալխիատ մեծ է, որ պիտի հատուցանէ] **Կատուած այնպիսի առաքինի մարդուն.** որովհետև գերբնական գործք է ըրածը : **Եւ ուղութիւն է, որ պիտի կարծիքը փոխելով շակողին վրայ, կամ արհամարհանք խօսք մը ըսէ անոր դէմ, ինքն անմիտ է և արժանի նախատուելու հասարակաց միաբանութենէն :**

Հինգերորդ՝ հասարակաց սովորութիւն եղած բանը երբ անվնաս է, [թէ և անկէ աղէկ կերպ ալ գտնուի, բայց բազմութիւնը չուհաճեցրնելու համար, քանի որ ամէնքը համոզուած չեն փոխելու, պէտք է թողուլ :

Վիշա այս կանոններուն վրայ Ճիշդ կենալով [թէ որ քննենք ազգերնուս մէջ եղած ամէն շփոթութիւններուն պատճառները, այնպիսի աղէկ տարի մը կ'ունենաք, որ սկիզբ կ'ըլլայ ազգերնուս պայծառութեանը] : **Որով**

Եւ դու Պարոն ջ. որ կուզէիր թըշնամիններուդ յաղթել. դու ալ Պարոն է . որ կը փափաքէիր Ճմարտութեան ձեր կողմն ըլլալն իմացուիլը . և դու Պարոն լ. . որ կը բաղձաս ճանչցընել ամենուն իրենց Հայազգի ըլլալը . այս ամէն ուզածնիդ ալ որչափ որ արդարացի է կը կատարուի, առաջարկելով պատճառնիդ, և առանց խոտորելու քըննութեան կանոններէն երկու կողմէն խօսելով, ինչուան որ ամէնքն ալ միաբանին Ճմարտութեան վրայ : **Ուստի հիմա ես նորէն ձեզի ամենուդ կը չնորհաւորեմնոր և Ճմարտութեան պայծառութիւնը ամենուդ մտաց մէջ ծագող տարի մը . յայտնի գուշակելով** [թէ ինչպէս որ մենք հոս ամենքնիս ալ միաբանեցանք այս աղէկ տարին սկսելու, և այս քննութեան կանոններուն ալ հաւանեցանք, կը գուշակեմ կ'ըսէմ և կը հաւատամոր մեր ամէն ազգայինք ալ եթէ այսօր ժողովուած ըլլային մեզի հետ, անոնք ալ սիրով պիտի միաբա-

նէին այս մեր խորհրդոյն : **Եւ որովհէտեւ այս աղէկութիւնը շատ բանի մէջ մինակ մեզմով ըլլար, այլ պէտք է որ ամէն ազգայինք ալ իմանան ու ջանան գործադրելու, մանաւանդ ազգերնուս մեծամեծները, անոր համար հիմա կը յանձնեմ մեր այս Բազմավիպին ամէն սիրելի ընթերցողներուն՝ որ հաղորդեն այս մեր ըրած խորհուրդը տեղն 'ի տեղը իրենց ծանօթիցը, որպէս զի անոնք ալ միաբանին այս մեր խորհրդոյն . և ամենքնիս մէկ տեղ սկսինք այս աղէկ տարիններուն գործադրութիւնը ընել այսպիսի կերպով : **Վախ առանձին գերդաստաններու իրենց տնական գործոց կարգաւորութենը վրայ խօսելով, պէտք է որ ամէն մարդ իր առանձին փափաքը կատարելու կարող ըլլալու համար, որն որ իր ընտանեացը և բարեկամացը և իր առուտուրին կը պատշաճի, առանձին անոնց հետ խօսակցի, և այս քըննութեան կանոններով իրենց գործերը կարգաւորէ ու միաբանի : Երկրորդ այն բաներն որ ընդհանուր ազգերնուս մէջի շփոթութիւնները վերցրնելու համար են, ազգին օգտին կը պատշաճին, զասոնք շտկած տեսնել ուզողները, իրենց միտքը և իրենց պատճառները գըրեն և հրատարակեն, որպէս զի ամէն ազգայինք կարդան ու իմանան անոնց պատճառները . կամ հաւանին և իրենց հաւանութիւնը յայտնեն, որով այն բաներուն մէջ շփոթութիւնը վերնայ ազգերնուս մէջէն . և կմ եթէ իրենք ալ ունին ուրիշ անոնց գրածներուն հակառակ Ճմարտութիւն յայտնող պատճառները, այն պատճառնին յառաջ բերեն, ու պատասխան տան . և այսպէս իրարու պատճառները լսելով, և ուղիղ քննութեան կանոններուն վրայ միշտ կենալով՝ իրարու միտքը հասկընանք և հակըննենք, ինչուան որ պարզ պայծառ Ճըշմարտութեն վրայ ամենքնիս ալ միաբանաց . որով ըլլայ մէջերնիս կատարեալ խաղաղութիւն և ամենայն բարութեց լունն :****